ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ-ն ՀՀԱՆՇՕԾ-ԷԱՃԱՊՁԲ-2026/62 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ	Ընդունարանի սեղան (Reception Desk)	Արման Գաբրիելյան Վահանի ԱՁ	Ապրանքի ընդհանուր նկարագիր և նշանակություն Առարկա: Ընդունարանի (ռեսեպշնի) սեղան՝ նախատեսված վարչական կամ հասարակական շենքերի, հաստատությունների և բժշկական կենտրոնների մուտքային/ընդունելության գոտիների համար: Կառուցվածքային տեսակը: Կոր կամ կիսաշրջանաձև մոդուլային կամ միաձույլ կառուցվածք՝ նախատեսված երկու աշխատատեղի համար: 2. Հիմնական չափսեր և հանդուրժողականություն (± տատանումներով) Երկարություն (Լայնություն): 3500 մմ (թույլատրելի շեղումը՝ ±50 մմ) Խորություն (ընդհանուր): 800 – 900 մմ Բարձրություն (աշխատանքային սեղանաձածկ): 750 – 760 մմ (ստանդարտ էրգոնոմիկ բարձրություն) Ընդհանուր բարձրություն (ներառյալ դիմային պատնեշը): 1100 – 1150 մմ 3. Նյութեր և

					որակական պահանջներ Հիմնական կմախք և սեղանաձածկ: Պատրաստված բարձր խտության, դիմացկուն լամինացված սալիկից (ЛДСП / МДФ)՝ համապատասխան որակի ստանդարտներին: Սեղանաձածկի հաստությունը՝ ոչ պակաս, քան 25 մմ, պատված մեխանիկական և խոնավության նկատմամբ կայուն շերտով (HPL կամ բարձր որակի մելամինե պատվածք): Եզրագոտիները բարձր կարգի: Պատված լինեն հարվածադիմացկուն PVC եզրաշերտով : Դիմային երեսպատում (Ֆասադ): Դիմային հատվածը ձևավորված լինի ուղղահայաց դեկորատիվ տարրերով (ռեյկաներով)՝ ինտերիերին համապատասխան բաց բեժ/կաթնագույն կամ բնական փայտանման երանգով չափերը և գույները համապատասխանեցնել պատվիրատուի հետ: Անկյուններ և միացումներ: Սեղանի արտաքին եզրերը պետք է լինեն կլորացված (կորագիծ), բացառվեն սուր, վնասվածքածին անկյունները: 4. Լրացուցիչ տեխնիկական պահանջներ և հարմարություններ Մալուխների կառավարում (Cable Management): Սեղանաձածկի յուրաքանչյուր աշխատանքային հատվածում պետք է առկա լինի մալուխների անցկացման առնվազն մեկական խցիկ (կաբելային լյուկ՝ կափարիչով): Էլեկտրական և լուսավորման համակարգ:Ներառված լինի ներկառուցված LED լուսավորություն (ժապավեն) սեղանի ստորին հիմքի հատվածում և դիմային վահանակի վերին եզրին (չեզոք կամ տաք սպիտակ գույնի, հագեցած սնուցման բլոկով): Ֆուրնիտուրա: Օգտագործված մետաղական և պլաստիկե բոլոր

				բաղադրիչները (հենարաններ, ամրակներ, խցիկներ) պետք է լինեն ամուր, կոռոզիայից պաշտպանված և շահագործման համար անվտանգ: 5. Գույնը և դիզայնը Գունային գամմա: Բաց երանգներ (կաթնագույն, բեժ կամ բաց մոխրագույն)՝ համակցված բնական փայտի կամ տաք երանգի ուղղահայաց գծային դեկորներով (համաձայն պատվիրատուի կողմից ներկայացված նմուշ-նկարի): 6. Երաշխիքային պայմաններ Մատակարարվող կահույքի երաշխիքային ժամկետը՝ ոչ պակաս, քան 24 (քսանչորս) ամիս՝ սկսած ապրանքի հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահից: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված և համապատասխանի գործող ստանդարտներին: Նմուշ-լուսանկար (Տեսողական կողմնորոշման համար)(Մատակարարվող ապրանքի արտաքին տեսքը պետք է առավելագույնս համապատասխանի ստորև պատկերված մոդելներին) (Չափաբաժին 3՝ նկարը կից)

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ИП Арман Габриелян Ваганович в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԱՆՇՕՑ-ԷԱՃԱՊՁԲ-2026/62 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
3				